

Պ-341-15.06.2018,07.09.2018-ՖԿ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ր
«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի.

1) կատարման արդյունքում կազմված՝

ա. կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման եւ/կամ նպատակային արդյունավետության եւ/կամ ծախսային արդյունավետության վերաբերյալ.

բ. ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները ներառում են սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի տեղեկատվությունը եւ 2-րդ կետի ա. կամ բ. կամ գ. կամ դ. ենթակետով նախատեսված կարծիքը:

2) կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը, ըստ անհրաժեշտության, ներառում է՝

ա. գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին.

բ. գրառում՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ.

գ. առաջարկություններ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը եւ այլ շահագրգիռ կողմերին.

դ. հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների ղեկավարների ներկայացրած առարկությունները եւ բացատրությունները.

ե. եզրակացություններ.

զ. այլ տեղեկատվություն:»:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում «տարեկան հաղորդումը Ազգային ժողով ուղարկվելուց առնվազն մեկ ամիս առաջ» բառերը փոխարինել «մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրերի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահը Ազգային ժողով է ուղարկում այդ եռամսյակի ընթացքում ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող ցանկը՝ բաշխված ըստ ամիսների»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Փ Ո Փ Ո Ն Կ Ո Ղ Հ Ո Դ Կ Ա Շ Ն Ե Ր Ի Կ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Յ Ա Ն
Օ Ր Ե Ն Ք Ը

«Հ Ա Շ Կ Ե Ք Ն Ն Ի Զ Պ Ա Լ Ա Տ Ի Մ Ա Ս Ի Ն» Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Յ Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ո Ւ Մ
Փ Ո Փ Ո Ն Ո Ւ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ե Կ Լ Ր Ա Յ Ո Ւ Մ Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի.

1) կատարման արդյունքում կազմված՝

ա. կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման եւ/կամ նպատակային արդյունավետության եւ/կամ ծախսային արդյունավետության վերաբերյալ.

բ. ֆինանսական եւ համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները ներառում են սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի տեղեկատվությունը եւ 2-րդ կետի ա. կամ բ. կամ գ. կամ դ. ենթակետով նախատեսված կարծիքը:

2) կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը, ըստ անհրաժեշտության, ներառում է՝

ա. գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին.

բ. գրառում՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ.

գ. առաջարկություններ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը եւ այլ շահագրգիռ կողմերին.

դ. հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների ղեկավարների ներկայացրած առարկությունները եւ բացատրությունները.

ե. եզրակացություններ.

զ. այլ տեղեկատվություն:»:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում «տարեկան հաղորդումը Ազգային ժողով ուղարկվելուց առնվազն մեկ ամիս առաջ» բառերը փոխարինել «մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրերի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահը Ազգային ժողով է ուղարկում այդ եռամսյակի ընթացքում ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող գանկը՝ բաշխված ըստ ամիսների»:

Հոդված 3. 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ արված առաջարկությունների

NN	Առաջարկի հեղինակ	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Հիմնական զեկուցողի եզրակացությունը առաջարկի վերաբերյալ	Գլխադասային հանձնաժողովի որոշումը առաջարկի վերաբերյալ
1.	Աժ պատգամավորներ Գագիկ Մինասյան Սամվել Նիկոյան Տատյանա Միքայելյան Գևորգ Գորգիսյան Արմենուհի Կյուրեղյան	Հոդված 3.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից հաջորդող տասներորդ օրը:	«Հոդված 3.» բառերը փոխարինել «Հոդված 4.» բառերով:	Ընդունված է:	Ընդունված է:
2.	Աժ պատգամավորներ Գագիկ Մինասյան Սամվել Նիկոյան Տատյանա Միքայելյան Գևորգ Գորգիսյան Արմենուհի Կյուրեղյան	Հոդված 3.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից հաջորդող տասներորդ օրը:	«Հոդված 3.»-ի «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից հաջորդող տասներորդ օրը: » նախադասությունը փոխարինել հետևյալ բովանդակության նախադասությամբ. «Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրերի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահը Ազգային	Ընդունված է:	Ընդունված է:

			<p>Ժողով է ուղարկում այդ եռամսյակի ընթացքում ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող ցանկը՝ բաշխված ըստ ամիսների»:</p>		
3.	<p>Աժ պատգամավորներ՝ Փազիկ Մինասյան Սամվել Նիկոյան Տատյանա Միքայելյան Գևորգ Գորգիսյան Արմենուհի Կյուրեղյան</p>	<p>«Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի <u>վերնագիր</u></p>	<p>Օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո ավելացնել «և լրացում» բառը:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Ընդունված է:</p>